

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

(ՄԻ ՔՅԵՒ ԽՈՍՔ ՆՐԸ ԿԵԸՆՔԻ ԵՒ ԴՐԱԿԱՆՆԱԿԲՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՄԸՆԻՆ).

Գ Բ Ե Ց

իսահակ Յարութիւնեանց

(Արտատպահ ՝՝ ԼՈՒՄԱՅԻ գրական հանդիսից).



891.99.092

Դ-132.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Արքածելի և ընկ. || Տիպոգր. Մ. Շարաձե և Կ°.
Николаевская 21.

1896

ՏԵՍ ԽՈՎ Ը

-6 NOV 2011

21578
ՏԵՍ ԽՈՎ Ը
Դ-132 Պայմանագիր
1y 887 28/12/81

1013
891.99.092

7-132.

ԱՏԵՓԱՆՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

Ա-8

(ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ՆՐԸ ԿԵԸՆՔԻ ԵԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂՈՒ-
ԹԵԸՆ ՄԱՍԻՆ)։



Ց Ֆ Ե Ց

Իսահակ Յարութիևնեանց

(Արտադպած „ԼՈՒՄԱՅԻ“ գրական հանդիսից)։

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Մ. Շարաձեի և Ընկ. || Տիպոգր. Մ. Շարաձե և Կ°.
Նիկոլաևսկալ 21.

1895

1005
21578

10 JUN 2013

68.163

ԽԱՐԱԿԱՆ
ՎԻՃԱԿԱՆ ՂԱ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՊԵՐԱԿԻՑ

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՐԱՎԱՐ ՎԻՃԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՆ ՂԱ
(ՔԱՐԱՎԱՐ ՎԻՃԱԿԱՆ ՂԱ)

Դозволено цензурою Тифлисъ, 2 Декабря 1895 г.



ԱՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԵՍՈՆՆԵԱՆ

(Մի քանի խօսք նրա կեանքի եւ գրականական ուղարկուած ու ապրուած ապահովութեան մասին):

„Եւ զու համոզուած, որ օշաբտութեան սկզբունքներին եւ հարազատ թարգման, գրչով թղթի վրա գծագրում էիր դուք քրոբերը ապնիւ եւ ընտիրք, Ք. Բարխուղարեան:

Հայութեան կենդրոն՝ Ս. Էջմիածնում 1889 թ. փետրուարի 19-ին կամ հայոց մեհեկան ամսի 13-ին, մեր գրականութեան և աղզային վերածնութեան հիմնադիր սուրբ Մեսրոպի մահուան տարեդարձի օրը, խորհրդաւոր գուգադիպութեամբ, կնքեց իր մահկանացուն Ստեփան-նոս Պալասանեանը:

Ո՞վ էր նա:

Պալասանեանն իր աղզի հարազատ զաւակը, հայ աշխարհիկ լեզուի ու գրականութեան պայծառ աստղերից մէկն էր և հայ մանկուոյ դաստիարակը: Նա ծնուել է Մոլդավիայում, այժմեան Օռոմինխայի թագաւորութեան Քողուչան քաղաքում 1837 թուին և մանկութեան ժամանակ թոթովել է նաև մոլդավիեէն: Նրա հօր անունն էր

Յովհաննէս, իսկ մայրը կոչում էր Փլօրա: Փոքրիկ Ստեփաննոսն իր սկզբնական ուսումն ու կրթութիւնը ստանում է իր ծննդավայր Բօդուշանում Տէր Պօղոս քահանայ Յակոբեանի մօտ: Մինչև տասն և հինգ տարեկան հասակը վայելելով իր սիրելի ծնողաց գորովագութ խնամատարութիւնը, 1852 թուին պատանի Պալասանեանը զբուծում է իր սիրելի հօրից: Սակայն նրա մտաւոր ընդունակութիւնն ու դէպի ուսումն տածած սէրը չեն թողնում, որ ընկճուի խեղճ որբի սիրոն հայր տխուր հանգամանքից. ընդ հակառակը նրան յաջողւում է նոյն տարին (1852 թ.) ուղերուել Փարիզ և Բօդուշանի հայոց «ազգային հոգաբարձութեան» ատենապետ պ. Գասպար Կոյլաւեանի միջնորդութեամբ ընդունուում է ի թիւա ձրիափարժ աշակերտաց Փարիզի Մուլադեան վարժարանի¹⁾:

¹⁾ Աղա Սամուել Մուրադեանը, որի անունով կոչուեցաւ Փարիզում Հիմուտած ուսումնարանը, ծնուել է Եւդոկիայում 1760 թուին: Սամուելի հայրը վաճառականական նպատակով ուղերուում է դէպի Հնդկաստան. Ճանապարհին նա իր որդոց հետ միասին այցելում է Վենետիկի Միհթարեանց վանքը և սիրալիր ընդունելութիւն գտնում հայ վարդապետներից 1775 թուին:—Երեքի Միհթարեան հայրերը շատ մեծ տպաւորութիւն և աղքեցութիւն են արել այդ ժամանակ երիտասարդ Սամուելի սրտի վրայ, որ ապագայում իր ազգօգուտ կտակի իրագործելը թողնում է գրանց ձեռքը:—Աղա Սամուելը ճանապարհին հիւանդանաւով՝ վախճանուում է Սուրաթում՝ երկու երիտասարդները տրտմութեամբ լցուած՝ թաղում են իրենց հօր դիակն սյդտեղ և ճանապարհ ընկնում դէպի Մադրաս: Սամուելը ժիր և աշխոյժ երիտասարդ լինելով՝ յաջող գործունէուած թիւն է ցոյց տալիս վաճառականական ասպարիզում և շուտով ամուսնանում է Եղուարդ Ռափայէլ Ղարամեան անունով՝ աղդեցիկ ու յայտնի հարուստ հայ վաճառականի դըստեր հետ: Եղուարդ Ռափայէլը մեռնելով կտակում է մի

Այդ միջոցին Մուրադեան դպրոցը կառավարում էին Սարգիս Թէոդորեան և Գաբրիէլ Այվազեան վարդապետները, սակայն արդէն սկսուել էր դրանց գժտութիւնը Վենետիկի միաբանութեան հետ. և Պալասանեանի վարժարան

փոքրիկ գումար—այն է 7309 հուն կամ մօտ 70,000 ֆրանկ, որ Միհթարեանց հսկողութեամբ մի դպրոց պահպանուի հայազգի մանուկների դաստիարակութեան համար. Սամուել Մուրադեանը, որ հանգուցեալի փեսան և կտակաւարներից մէկն էր, 1792 թուի փետրուարին Մադրասից գրած մի նամակով խոստանում է Միհթարեան միաբանութեան անդամ հայր Նիկողայոսին, որ Ռափայէլի որդոց դաստիարակն էր Լօնդոնում, Ռափայէլի կտակած գումարի վրայ աւելացնել իր ստացած 32,000 հուն ժառանգութեան տասներորդ մասը, այն է 3200 *) հուն, եթէ հայր Նիկողայոսը բարեհածի գալ Մադրաս: Այսպիսով հայազգի մանկանց դաստիարակութեան համար նա համաձայնում էր տալ իր աներոջ կտակածգումարի հետ միասին ընդամենը 10,509 հուն կամ մօտ 100,000 ֆրանկ. սակայն հայր Նիկողայոսը Մադրաս չէ գնում և այդպիսով թէ կտակը և թէ խոստանումը մնում են անկատար:

Անցնում են տարիներ, սակայն աղա Սամուելը չի մոռանում իր համազգի աղքատ մանուկների դաստիարակութեան նպաստելու խոստումը և անդադար նամակներ է գրում Վենետիկի Միհթարեանց, որ իրենց միաբաններից մէկն ուղարկեն Մադրաս՝ իր որդոցը հայկական կրթութիւն տալու և ապագայ դպրոցի մասին խորհրդածելու: Զգիտենք ճանապարհի հեռաւորութեան, թէ սյլ պատճառներով այդ ժամանակամիջոցում միաբանութիւնը չի յարգում աղա Սամուելի առաջարկութիւնը: Մուրադեանը տեսնելով որ իր կենդանութեան ժամանակ չի կարող հասնել իր բաղձանքին, չի յուսահատում և մեռնելու ժամանակ իր վաղուց հետէ փայփայած գաղափարի համար կտակում է մի պատկառելի գումար:

*) Հնդկական հուն ոսկին արժէ 9 ֆրանկ 32 սանտիմ:

գալու երրորդ տարին արդին, 1855 թուին, այդ գժտութիւնն այն դժբաղդ հետևանքն ունեցաւ, որ պատճառ եղաւ գլուխի անկման:

Ապա կարգադրում է, որ եթէ իր ժառանգներից մէկը վախճանուի առանց զաւակի, նրա կարողութիւնն աւելացուի դպրոցին կտակած գումարի վրայ և որդոցը պատռեր է տալիս, որ իրենց արդիւնքից տարեկան հինգ տոկոս աւելացնեն դպրոցին կտակած գումարի վրայ:

Իր հայրենիքից հեռու՝ պանդխոռութեամբ Հնդկաստանում ապրող աղա Սամուէլ Մուրադեանը, որի սիրալ տրոփում էր իր թշուառ հայրենակիցների անմեղ մանկանց համար և որի ոգին սաւառում էր իր սիրելի հայրենեաց ձիւնագագաթ լերանց վրայ, վախճանուում է 1816 թ. Մադրասում 56 տարեկան հասակում:

Միթարեան միաբանութիւնն այս անգամ անուշադիր չէ թողնում իրեն առաջարկուած պատիւն և Սամուէլի որդոց ու կտակակատարների՝ Եղուարդ և Յովհաննէս Մուրադեանների առաջարկութեան համաձայն, ուղարկում է իր միաբաններից երկուսին՝ Սարգիս Թէոդորեան և Սուքիս Սոմալեան վարդապետներին Հնդկաստան։ Սակայն մինչև սրանց Հնդկաստան համելը, ժառանգներից ու կտակակատարներից մէկը, Պ. Յովհաննէս Մուրադեան, ուղևորում է իր ընտանիքով Եւրոպայ. իսկ միւս եղբայր Եղուարդը պատճառ բերելով իր եղօր բացակայութիւնը, չի իրագործում իր հօր կտակը և վարդապետներին ունայն ձեռքերով 1820 թ. վերադառնում են Վենետիկ, երկու տարի Մադրասում մալուց յետոյ:

Զորս տարի զուր անցնելուց յետոյ՝ Սարգիս Թէոդորեան վարդապետը հանգուցեալ Սամուէլի տիկնոջ հրաւանօք կրկին ուղևորուում է դէպի Հնդկաստան՝ իրեւ գործակալ Միթարեան միաբանութեան, սակայն կտակի վերաբերութեամբ չի կարողանում համաձայնութիւն կայացնել։ Միթարեան միաբանութիւնը տեսնելով, որ Մուրադեանները չեն կամենում իրենց հօր կտակն իրագործել, գիմում են անգղիական օրէնքի օգնութեանը:

Թէոդորեան, Այլազեան և Գալֆայեան հայրերը թողնելով Մուրադեան վարժարանը, մամնաւոր կեանք են վարում Փարիզում. իսկ Մուրադեան վարժարանի այն սարում Փարիզում:

Մուրադեաններն երկեղեց համաձայնում են առանձին դաշնադրութեամբ գործը վերջացնել հայր Թէոդորեանի հետ և Այս դաշնադրութիւնը տեղի է ունենում 1827 թուին և սրանով պէտք է Մուրադեան կտակի գործը վերջացած համարուէր, սակայն սյդպէս չէ լինում. Մուրադեան եղբայրները գումարի կեսը վճարելուց յետոյ դզջում են և չեն կամենում մնացածն ևս վճարել և հնարք են գտնում Թէոդորեան վարդապետին բանտարկել տալ. Հայր Թէոդորեանը բանտարկ բողոքում է Մադրասի անգղիական բարձրագոյն ատեանին, և աղատուում է հարիւր օրեայ բանտարկութիւնից յետոյ։ Վերջապէս նոյն բարձրագոյն ատեանը 1832 թ. վճռում է մնացած գումարն ևս յանձնել հայր Թէոդորեանին։ Դաշնագիրը կնքում է 1832 թ. մարտի 31-ին ու հայր Թէոդորեանը ստանում է կտակի ամբողջ գումարը, որ ստացած տոկոսի հետ ի միասին անում է մօտ երկու միլիոն ֆրանկ։

Մի տարի անցնելուց յետոյ Միթարեանները Պագուայ քաղաքում մի դպրոց են հաստատում և անունը կնքում «Մուրադեան վարժարան»։ այս դպրոցի տեսուչ կարգում է Թէոդորեան վարդապետը։ Սակայն շուտով Յովհաննէս Հնդկաստանից Եւրոպայ գալով՝ նորոգում է իր պահանջը, որպէս զի Միթարեանները Սամուէլ Մուրադի կտակի գործադրման հաշիւը տան. և նրան յաջողում է աւստրիական արտաքին գործերի նախարար՝ հոչակալուր Մետերնիխի միջնորդութեամբ ստիպմամբ հաշիւ պահանջը միաբանութիւնից։ Միթարեանութիւնն այդ հաշուետութիւնից խոյս տալու համար պատրաստում է դըպրոցը տեղափոխել ուրիշ երկիր. հայր Թէոդորեանը գնում է Փարիզ և Փրանսիայի արտաքին գործոց նախարար Գիզոն թոյլատութիւն է տալիս Մուրադեան վարժարանը տեղափոխել Փարիզ 1845 թ. հայր Թէոդորեանը Փարիզում 400,000 ֆրանկով գնում է մարկիզի պալատ և

Ների ծնողներն, որ գաղափարակից և համակրող էին դը-
րանց, հանում են իրենց որդոցը վարժարանից և նրանց
խնամատարութեանը յանձնում:

200,000 նորոգման համար ծախսելով այդտեղ տեղաւո-
րում է Մուրադեան վարժարանը՝ ազատ Փրանսիական դը-
րոցական կանոնադրութիւններից և պետական հսկողութիւ-
նից. 1846 թ. հայր Թէոդորեանը ձեռք է բերում Լուի
Ֆիլիպ արքայի երկու հրովարտակները Մուրադեան դպրոցի
հաստատութեան վերաբերմամբ:

Միիթարեան միաբանութիւնն այդ մեծածախս դպրոցը
կառավարելու համար տարեկան ծախսում է 42,000 ֆրանկ,
սակայն սկզբներում մի որոշ արդիւնք չէ տալիս. աշակերտ-
ները, որ ուղարկվել է ին լինում, բերում են կոստանդնու-
պօլսից, սակայն ոմանք բոլորովին անպատրաստ և ոմանք մի
փոքր ուսման պաշարով, այնպէս որ Փարիզում հիմնուած
մեծանուն վարժարանը սկզբնական դաստիարակութիւն է
տալիս նրանց, ուստի Թէոդորեան վարդապետը նախագծում
է Պօլում բանալ մի նախապատրաստական տարրական դը-
րոց, որի աշակերտներն աւարտելով՝ գնան Փարիզ և այն-
տեղ գոնէ միջնակարգ դպրոցի դասընթացն ուսանեն:

1853 թ. Հռովմի պապը պահանջում է Փրանսիա-
կան պետութիւնից, որ Մուրադեան վարժարանը Հռովմ
փոխադրուի, սակայն հայր Սարգիս Թէոդորեանն ամեն կերպ
արդեկք լինելով՝ յաջողում է Փրանսիական կառավարու-
թեան դիմադրութեան շնորհիւ չ'կատարել պապի և միա-
բանութեան աբբայ Հիւրմիւլեանի ցանկութիւնը: Եւ այս-
պիսով լարում է Մուրադեան վարժարանի վերատեսչի և
միաբանութեան աբբայի յարաբերութիւնը, իսկ վարժարա-
նի ուսումնական մասի տեսուչ Գարբիէլ վարդապետ Այվա-
զեանի Զմիւռնիայի «արշալոյս Սարարատեան» թերթի մէջ
Հրատարակած մի նամակն առիթ է լինում նրա Մուրա-
դեան վարժարանից և նաև Միխթարեան միաբանութիւնից
արտաքսուելուն: Այս դէպիից յետոյ Թէոդորեանի և Հիւր-
միւլեանի գժտութիւնն աւելանում է և վերջանում է նրանով,
որ 55 թ. ապրելին ծերունի Սարգիս վարդապետ Թէոդորեա-

Այսպիսով հարք Թէոդորեան, Այվազեան և Գալֆա-
յեան ծրագրում են Փարիզում հիմնել մի նոր դպրոց ի-
րենց լիակատար իրաւանց ներքոյ «Հայկագեան» անո-
նով, սակայն յաջողութիւն չեն ունենում:

Մուրադեան վարժարանի մի խումբ Մոլդավացի
սաներն իրենց ծնողների կամքով նոյնպէս թաղում են
վարժարանը և ապավինում իրենց նախկին և սիրելի
դարձած տեսուչներին. ահա այս երիտասարդ ուսանող-
ների մէջ է լինում նաև Ստեփան Պալասանեան որբ ա-
շակերտը, որի ուսման վճարի համար դիմում են Բօդու-
շանի հայոց ազգային կառավարութեան: Բօդուշանի հա-
յոց ազգային վարչութեան ուղարկուած այս թղթի մէջ
ևս յիշում է, որ ուսանող Պալասանեանն ունեցել է մի
«մամնաւոր բարերար» Կոլլաւեան Գասպար անունով: Բօ-
դուշանի հայոց ազգային հոգաբարձութիւնը յարգելով
Այվազեան վարդապետի՝ և իր ընկերների միջամտութիւ-
նը՝ վճռում է ազգային զանձարանից երկք հազար (3000)
ֆրանկ վճարել Ստեփան Պալասանեանի երկու տարուայ
ուսման և ասլրուստի համար. — այս գումարն յետոյ հան-
գուցեալ Պալասանեանն ու իր եղբայրները վճարում են
Բօդուշանի ազգային զանձարանին: — Յառաջ ենք բերում
Այվազեան Փարիզէլ վարդապետի Բօդուշանի ազգայիննե-
րին գրած թղթի պատճէնը, որ հանուած է Բօդուշանի
հայոց ազգային դիւանից.

«Մեծապատիւ Աղաներ

Ազգային կառավարութեան Հայոց Պօթուշանի.

«Մուրադեան վարժարանին ցաւալի վիճակին պատճա-

նին դատարանի և զինու զօրութեամբ հեռացնում են իր
Հիմարկած վարժարանից, որովհետեւ նա իր սաներին կըր-
թում էր Հայկական ոգուով և ոչ թէ զուտ կաթոլիկա-
կան, որ հարկաւ համելի չէր կարող լինել Հռովմին:

ռաւ, ըստ հրամանին Յակոբ Աղայի Տըյըթեան, Խոայի Ա-
ղայի Դրանկսօլեանց և Կարապետ Աղայի Խաչիկեան և Աս-
տուծատուր Աղայի Մսերեան, իրենց որդիքը Հանեցինք
այն վարժարանէն ու առ այժմ դրինք մէկ դպրոց մը ուր
պիտի կատարելագործեն իրենց ուսմունքը մեր Հոգաբարձու-
թեանը տակ. այն Մոլտաւիացի պատանիներէն չենք կրնար
զատել նաև Պալասանեան Ստեփան մնունով որմ տղան,
յուսալով թէ մէկ երկու տարեկան ճանքը իր աղքական-
ներն ու բարեկամները կամենան վճարելու. ինչպէս որ մեր
ազնիւ բարեկամ Յակոբ Աղան ալ յօյս կուտար:

Այս օրերս Մսերեան Աստուծատուր Աղան Խոստա-
ցաւ որ նոյն Ստեփան պատանոյն՝ ամար տարին 200 ֆը-
րանք ինքը վճարէ. բայց որովհետեւ անոր տարեկան ծախ-
քը 1500 ֆրանքէն պակաս չըլլար, մեզի պարտը Համարե-
ցանք այս բանս ծանուցանել ոչ միոյն Կօյլաւեան աղքասէր
Գասպար Աղային՝ որ տլուն մասնաւոր բարերարն է, այլ և
մեծապատիւ Աղդային կառավարութեան Քաղաքիդ. և խընդո-
րել որ այս քարենքարոյ եւ ուսումնասէր պատանոյն գոնէ-
երկու տարուան վճարքը Հոգացուի, որով ուսմունքը ան-
կատար չմայ, այլ մանաւանդ երբոր դառնայ իր Հայրենի-
քը՝ կարող ըլլայ օգտակար ը յալու իրեն ընտանեացը
ու նաեւ քաղաքակցոցը՝ վարժապետութիւն ընելով կամ թէ
ուրիշ որկեցէ պաշտօնով:

Պօթուշանի Աղդային կառավարութեան ողորմածու-
թիւնն ու ազգասիրութիւնը յօյս կուտայ մեզի որ աս ազ-
նիւ պատանին չի մնար երեսի վրայ, այլ կը գտնէ իրեն
Հայրենակից Աղաներուն առատաձեռնութենէն աս պէտք ե-
ղած տարեկան վճարքը 1500 ֆրանք, ու յաւիտեան երախ-
տագէտ կը լլայ իրենց: Աս ուրախարար որոշման կը սպա-
սենք օրէ օր:

Միանդամայն կը խսդինք, մեծապատիւ Աղաներ, որ
եթէ յանկարծ անկարելի երկնայ Զեղի աս աղաշանքիս կա-

տարումը (որ մենք չենք կարծեր), որչափ կարելի է շու-
տով իմացընեք մեզի՝ որպէս զի պարտքի տակ չմնանք, ու
ժամ մը առաջ զրկենք զպատանին իրեն Հայրենիքը, թէ-
պէտև ցաւով սրտի:

Ողջ լինել կը մաղթենք
Մեծապատիւ աղաներուդ

Ի Փարիզ, 12 յունիսի 1855 թ.

Խոնարհ ծառայք

Հ. Գաբրիէլ վարդապետ Ալվագովսքի,
նաև ի դիմաց

Հ. Սարգսի վարդապետի Թէոդորեան,
և

Հ. Ամբրոսիոսի վարդապետի Գալֆայեան:

1858 թ. Երիտասարդ Ստեփաննուն իր ուսման
ընթացքն աւարտելով զնում է իր ծննդավայր Բօդու-
շան քաղաքը և նոյն տարին, հոկտեմբեր ամսին, Թէո-
դոսիայի նորաբաց Խալիպեան ուսումնարանի հիմնադիր
Գաբրիէլ Այվազովսկին հրաւիրում է նրան՝ իր նախկին աշա-
կերտին, ուսուցչական պաշտօն վարելու այդ դպրոցում:

Քսան ու մէկ տարեկան վառվուն Երիտասարդ
Ստեփաննուն իրեն յատուկ ոգեսրութեամբ նուիրում է
իր գործին և օգտում է Գ. Այվազեանի նման հմուտ
գիտնականի բարեկամական աջակցութիւնից: Մուրագեան
և Հայկազեան զպրոցները թէն նրան բարձրագոյն կը-
թութիւն չեն տուել, սակայն նա կատարելապէս կիտէր
հայերէն և ֆրանսերէն լեզուները և շարունակ կատարե-
լագործում էր իր անզուգական հայկարան ու լեզուա-
գէտ ուսուցչի զեկավարութեամբ:

Ազատ ժամերին Պալասանեանը պարապում էր նաև
արդի գրականութեամբ և յօդուածներ էր զետեղում «Մա-
սեաց Աղաւենի» հանդիսում:

Սակայն Պալասանեանի պաշտօնավարութիւնն երկար չէ տևում Խալիպեան դպրոցում։ սկսում են Խալիպեան—Հայրապետեան յայտնի կուսակցութիւնների կոլեները և տաքարիւն Ստեփաննոսն էլ զանազան պատճառներով գժտում է Այվազեան եպիսկոպոսի հետ և 1861 թուին թողնելով Խալիպեան դպրոցն ու Թէոդոսեան, Հայրապետեան կոչուած կուսակցութեան հրաւէրով գնում է նոր-Նախիջևան՝ ընկերակցութեամբ Ստեփաննոս Շիշլիկեանի և Համբարձում Իփեկճեանի։ Հայրապետեան կուսակցութիւնը հակակրելով թէ Գ. Այվազեան եպիսկոպոսին և թէ նրա հիմնարկած Խալիպեան վարժարանին, այդ երեք գործունեայ երիտասարդներին միջոց է տալիս նոր-Նախիջևանում մինոր ազգային դպրոց բանալու։ Դրաբոցը բացում է և կառավարում Շիշլիկեանի դեկանարութեամբ։ Սակայն Այվազեանը չէր կարող հաշտ աշխատ աշխատ հակառակ կուսակցութեան գործունէութեան վրայ։ Նորաբաց դպրոցը վտանգաւոր է համարում Խալիպեան ուսումնարանի գոյութեան համար և թեմակալ Սրբազնը միջոցների խորութիւն չէ անում իր նպատակին հանելու, այսինքն նորաբաց դպրոցը կործանելու համար։ Հետեանը այն է լինում, որ 1863 թ. վերոյիշեալ երեք ուսուցիչներն եկատերինոսուլաւի նահանգապետից հրաման են ստանում՝ 24 ժամուայ ընթացքում թողնել նոր-Նախիջևանը։ Նրանք անմիջապէս ցրւում են և Պալասանեանը գալիս է Տփիսի։

Սկզբում երիտասարդ ուսուցիչը մամնաւոր դասեր է տալիս Տփիսի հայ ընտանիքներում, բայց իբրև լուռ, զգոյշ և համեստ մարդ շատերից յարգանք է վայելում և հաստատ քայլերով առաջ գնում։

Նոյն թուականին Պալասանեանը հրաւիրում է ուսուցիչ պաշտօնով Ներսիսեան դպրանոց և այդ օրից արդէն հետզհետէ յաճախակի է լսում նրա անունը սակա-

ւաթիւ հայ գրագէտների շրջանում։ Այդ միջոցին Տփիսիսում «կռունկ»-ի, «Մեղու»-ի և Պետրոս Շանչեանի շրջաններից դուրս շատ սակաւ էր հայախօնների և նա մանաւանդ հայերէն օրինաւոր գրել իմացողների թիւը, այդ պատճառով Պալասանեանն իբրև հոչակաւոր հայկաբանների աշակերտ և լաւ հայտէտ շուտով յայտնի եղաւ ազգային-հասարակական խնդիրներով զբաղուղղ շրջաններում։

Նա բնակում է «Մեղու Հայաստանի» լրագրի խրմբագիր Պ. Պետրոս Միմչոնեանի հետ ի միասին և ուսումնասիրում է մեր, արևելեան, նոր գրականական լեզուն, որովհետև իր գիտեցած և գործադրած արևմտեան բարբառով գժուար էր մեր գրականական ասպարիզում ճանապարհ հարթել և Տփիսի հասարակութեանը մատելի լինել։

Արարատեան բարբառի համն ու հոտը Պալասանեանն առաջին անգամ առնում է Խաչատուր Աբովեանի «Վէրը Հայաստանի» անմահ գրուածքից և ապա դառնում է մեր աշխարհիկ լեզուի մշակողներից մէկը՝ հրատարակելով այդ բարբառի քերականութիւնը, որ մինչեւ այժմ էլ չունի իր հաւասարը։¹⁾ Լեզուագիտական ընդունակու-

1) Այդ աշխատութեան վերնագիրն է. «Ընդհանուր տեսութիւն Արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց» և հրատարակուած է 1870 թ.։ Այդ աշխատութեան յառաջաբանում հեղինակը յիշելով, որ օգուտ է քաղել նաև Հ. Արսէն Այտընեանի «Քննական քերականութիւն»-ից, համեստաբար ասում է. « . . . մեր միտքը չէ ամենեին քերականութիւն գրել. այդ յանդգնութիւնը հեռու է մեզանից, միտ դնելով այն դրութեան, որի մէջ գտնում է մեր մասնուկ լեզուն։ Մեր գիտաւորութիւնը եղել է միայն լեզուի գլխաւոր ու ամենասովորական ձեւերը մէկ տեղ՝ հաւաքել։ գուցէ այս փոքրիկ աշխատութիւնը յորդոր լինի աւելի»

թիւն ունենալով և լաւ ուսումնասիրած լինելով գրաբարն և արևատեան աշխարհիկ լեզուն, նա շուտով ըմբռնում է արարատեան բարբառի ոգին։ Պալասանեանն իր աշխատասիրութեամբ ու դէպի ազգային լեզուն ու մատենագրութիւնն ունեցած սիրով մի այնպիսի սիրուն, վայելուչ ու սահուն ոճ է ստեղծում իր գրչով, որ մեր այժմեան հայտէտների ու մատենազիրների համար ևս կարող է նախանձելի լինել։

Նա իր տոկուն ջաշխատասիրութեամբ սովորում է նաև ոռւսերէն լեզուն և կարգում է Տփխիսի ռէալական դպրոցում ֆրանսերէն ու հայերէն լեզուների ուսուցիչ-այդ առիթով և ընդունում է ուստահպատակութիւն։ Մի առ ժամանակ այդտեղ պաշտօն վարելուց յետոյ այդ դպրոցի վարչութիւնը վկայական է պահանջում։ Պալասանեանից, սոյն պահանջն էառիթ է տալիս նրան մտածելու Պետերբուրգ գնալ և համալսարանի արևելեան լիզուադիտական բաժնում քննութիւն տալ. Պ. Պ. Սիմեոնեանի միջնորդութեամբ նա դիմում է հանդուցեալ ուսուցչապետ Ք. Պատկանեանին, սակայն պատասխան է ստանում, որ համալսարանում քննութիւն տալու համար անհրաժեշտ է ունենալ գեմնազիական վկայական։

Գիմնազիական վկայաթուղթ չունենալով՝ Պալասանեանը թողնում է Պետերբուրգ գնալու միտքը, սակայն չէ յուսահատում և իր բարեկամ Խանժիկի օգնութեամբ, որ այդ միջոցին տեղայս առաջին գիմնազիայի տեսուչն էր, գիմնազիայում քննութիւն է տալիս և ձեռք է բերում տնային ուսուցչի վկայաթուղթ։ Թէև նոյն միջոցին նա

մանրամասն դիտողութիւններ գրելու նոցա՝ որոնց քաջը ու սիրելի է մայրենի լեզուի յառաջադիմութիւնը»։

Նա ունի հրատարակած նաև «Գործնական բերականութիւն»։

ուսուցիչ էր նաև ներսիսեան դպրոցում, սակայն երեսի թէ այստեղ քիչ դաս ունենալու պատճառով ստիպուած էր նաև այլ տեղ պաշտօններ որոնել։

Իր տասնեւթամեայ պաշտօնավարութեան ժամանակ Պալասանեանը ներսիսեան դպրոցում ուսուցել է. հայոց լեզու, հայոց պատմութիւն, հայոց գրականութիւն, ընդհանուր գրականութիւն, ընդհանուր պատմութիւն և ֆրանսերէն։¹⁾

Թէև նա մամնագէտ մանկավարժ չէր, սակայն գիտէր վարուել աշակերտների հետ և իր առարկան սիրելի դարձնել. դասաւութեան ժամանակ նա լուրջ և խրստապահանջ էր, բայց ինքն ևս պատրաստ էր պարզել ու համբերութեամբ բացատրել այն, ինչ որ դժուար ըմբռնելի էր աշակերտներին։ Առհասարակ նա լաւ և ընտիր ուսուցչի հոչակ էր վայելում։

1869 թ. մի խումբ երիտասարդներ ոգերուուած հայ աղջկանց ազգային դաստիարակութեան գաղափարով իրենց ջանքով ու սուզ միջոցներով հիմնարկեցին սուրբ Դայլաւեան օր. դպրոցը. այդ խմբի մէջն էր նաև Պալա-

1) 1865 թուին Պալասանեանը հրատարակում է նաև ձեռնարկ ֆրանսերէն լեզուի համար, դրա կարևորութիւնը գրքի յառաջաբանի մէջ այսպէս բացատրելով.

« . . . Մի այնպիսի դասական գիրը, որով հայ պատասխները հայերէն լեզուի միջնորդութիւնով կարող լինեն ֆրանսերէնը սովորել, պէտք է ասել, մինչև այժմ չկայ մեղանում։ Այս պակասութիւնը ըստ մասին լրացնելու համար՝ հրատարակում ենք ահա ներկայ գրքով։ Ոստ մասսին, ասում ենք, որովհետեւ մեր նպատակը առ այժմ ուժի ոչինչ չէ, բայց եթէ մի սկզբնական ձեռնարկ տալ հայ մանուկների ձեռքը, որով կարող լինին նրանք կարճ միջոցում ֆրանսերէն անսխալ կարդալ քիչ շատ հասկանալ և մինչեւ անգամ թեթև խօսակցութեան մէջ վարժուիլ»։

սանեանը, որև այդ դպրոցի վարչութեան մէջ կրեց «հիմնագիր» անդամի անունը և հինգ տարի ձրի դասատութիւն էր անում (69—74)։

Պալասանեանը յարգուած էր նաև իր պաշտօնակիցների շրջանում իրու լուսամիտ, եռանգոտ, ներողամիտ, աշխատասէր և պարտաճանաչ անձնաւրութիւն։ ընկերական շրջանում նրա թերութիւնն էր համարւում նրա վերին աստիճանի և ժլատութեան հասնող խնայողութիւնը, սակայն այդ էլ իր հիմքն ունէր։ Նրա ձգտումն էր՝ իր կեանքի վերջին տարիներն անցկացնել Պարիզում և միմիայն գրականութեամբ զբաղուել։

Տփխիսում Պալասանեանն ամուսնացաւ բանաստեղծ Գէորգ Բարխուդարեանի քրոջ հետ, սակայն վերջինս կանխահաս մահուամբ ի Տէր հանգեաւ և իրու միակ միսիթարութիւն վշտահար Պալասանեանին թողեց մի փոքրիկ դուստր։ Պալասանեանն յետոյ երկրորդ անդամ ամուսնացաւ, սակայն այլևս ուրիշ զաւակ չունեցաւ։

Պալասանեանը Տփխիսում՝ մնալով անընդհատ պաշտօն է վարում Ներսիսեան դպրոցում մինչև 1881 թ. այդ թուին Գէորգ Դ. եղանկայիշատակ կաթողիկոսը հրավիրում է նրան սուրբ Էջմիածին՝ ճեմարանում հայոց պատմութիւն և ֆրանսերէն դասաւանդելու։

1883 թուին ճեմարանի ուսուցչական խումբը և աշակերտները, ճեմարանի դահլիճում, համեստ հանդիսով տօնում են Պալասանեանի քսանեւհինգամնայ ուսուցչական գործունէութեան յօրելեանը և այդ առթիւ Գամառ Քաթիպան նետիրուեմ է նրան «հայ վարժապետ» գեղեցիկ և խորին միտք պարտնօնիող հետեւալ բանաստեղծութիւնը։



Հայոց մատարչուուն մինանեան միամինե 8881 թի
մէ նույնաշընչ ՀԱՅ ՎԵՐԺԱԳԵՑԵՑ և պատրիարքութիւն այլ
(Ա. Պարտասանեանի 25-ամեայ յօբելեանին):

Թաղդը եւ հերթը, գիտեմ, կը հասեիմ ա միջնոց
Քեղեցիկ մի օր չայ գործիչներին,
Ոսքի կը կանգնեն մեր որդիքը ել,
Կ'ուզենան ազատ մարդոց կարգ մշտներ։
«Ռնենք, կատեն, մեծք կրօն եւ ազգութիւնն»։

Եւ ահա մեր չայ հարուստ մեծառունք,
Կապալառունքն, եսիսկոպոսունք,
Շէնք ու զարդերով ըսպայր ու զիմուորք,
Փալլուն կուսակրվ ատահամառոք,
Կոսկըսն պահածայ, իրանց դրուատել

Թէ՞ «այս ռուրդ մեմք ենք ծեռք քերեն»;
Ու կաղենայ, դափնի յ գալար պշաւկներ
Կը զարդարեն շատ ցույի սակատներ։
Մըսքից էլ չ'անցմէիր, Մտեվաննո՞ւ եղայր,
Այդ խոշոր սպրոդ սուտ-պարծոնի կամառ,
Որ օդ կարծեցած մեր հայրենեթիքն
Ուր ոսկոր, մարմին ու արին աշրին.
Ով տըսեց ընզու անձնու ազգին,
Կազդուրնց սիրուը, վերածնեց հոգին,
Մըկըստեց նոցա այժ առաջանում,

Որի, մեր օրով, դըսրոց է անոնն.
Ուր արին-բրտինը արին վար ու ցան—
Հըմձնողը նոցա անոնն լոոցան.
Հիմնադրի ճռչակ նորա ըստացան,
Ուր հիմքի վըրայ բնաւ չ'աջիւտեցան.
Իսկ որ ժիր, տոկուն մշակ իր ազգին
Են ճարարակսի չունեցան ան ոին.
Զի նորա անոնն և ան պարտուուն։
Հայ ժողովը պաշտօնեայ ունկնեան։

1883 թ.



Իսկ 1888 թուին նոյն ճեմարանի ուսուցչական խումբը և աշակերտներն անկեղծ կերպով չնորհաւորում են նրա երեսնամեայ ուսուցչական գործունէութեան տարեդարձը՝ ցանկանալով նրան դեռ երկար տարիներ առողջութիւն և եռանդութ ու ազգօգուտ գործունէութիւն։

Սակայն տարաբաղդաբար նախախնամութիւնն ուրիշ կերպ էր տնօրինել. յաջորդ թուի փետրուարին, կարճատեսկ հիւանդութիւնից յետոյ, վախճանուեցաւ հայ գրականութեան անխոնց մշակը՝ 52-ամեայ հասակում՝ սպատոր թողնելով ամուսնուն, դստերը, պաշտօնակից՝ ուսուցիչներին և բազմաթիւ աշակերտներին։ Հանգուցեալի մարմինը՝ վերջին պատշաճաւոր յարգանքներն ընդունելուց յետոյ, թաղուեցաւ սուրբ Գայիանէի վանքի բակի հիւսիսարելեան կողմը։

Համեստ գործչի անշուր դամբարանը դեռ ևս շատ սերունդների համար սուրբ էջմիածնայ ուխտատեղիներից մէկը կհամարուի, որովհետեւ Պալասանեանի գործունէութիւնը չէ սահմանսափակւում միմիայն ուսուցչութեամբ, որպէս զի միայն իր ընկերակիցներն ու աշակերտները յիշէին նրան. այդ դէպում գուցէ նրա խօսքի հետ դադարէր նաև ազգեցութիւնը, սակայն Պալասանեանի գրիչն ևս բեղմնաւոր և ոգերիշ է համդիսանում, ինչպէս և խօսքը. գրչի արդիւնքն աւելի շատ սերունդների սրտերն է տիրապետում քան խօսքինը։

Պալասանեանի եռանդուն և սահոն գրիշը չէ դադարում գործելուց. բացի իր երկասիրութիւնները հրատարակելուց, նա շարունակ գրում է ժամանակակից օրաթերթերի ու հանդէմների էջերում՝ ազգային ու հասարակական խնդիրների մասին։ Թէովոսիայում աշխատակցում է «Մասեաց Ազանուն», զարով Տիֆլսի՝ գրում է «Վունի» ամսագրում—որի մէջ ի միջի այլոց լոյս տեսաւ Պալասանեանի թարգմանութեամբ Վիկտօր Լանդ-

լուայի մի հետազօտութիւնը Մավսէս խորենացու պատմութեան աղբիւրների մասին—և «Մեղու Հայաստանի» լրագրում—մի ամառ, «Մեղու»-ի խմբագիր պլ. Պ. Սիմէոնեանի բացակայութեան միջոցին, վարում է նաև Ժամանակաւոր խմբագրի պաշտօն։ Ապա երբ հրատարակւում է «Մշակ»-ը և «Մեղու»-ն երկու ամսով դադարում, Պալասանեանն էլ ուրիշների հետ սկսում է աշխատակցել։ «Մշակ»-ին և հսկելով լրագրի լեզուի վրայ ընդհանրապէս, մամնաւորապէս խմբագրում է թերթի բանասիրական բաժինը։ Սակայն նրա ամենամտավոր ու մշակուած յօդուածները լոյս տեսան պ. Արգար Յովհաննիսեանի հրատարակած անգույզական «Փորձ»-ում և կարող են մեր առօրեայ մատենագրութեան ամենամտանկագին գարդը կազմել։ «Փորձ»-ի մէջ լոյս տեսան նաև նրա «Ֆրիչ» ատորագրութիւնը կրող մատենախօսական յօդուածները, որ նոյն պէս հաւասարը շունեցաւ ցայթմ։

«Փորձ»-ը գագարելուց յետոյ Պալասանեանը շատ քիչ է գրում, միայն վերջերը նրա մի քանի յօդուածները լոյս տեսան «Վարժարան» ու «Արարատ» ամսաթերթերում։

Պալասանեանն իբրև հասարակական գործիչ՝ նպաստում է նաև Թիֆլիզի հայ թատրոնական գործին՝ սըրբագրելով ու խմբագրելով զանազան թարգմանական պիէսներ և անձամբ թարգմանում է ֆրանսերէնից Վիկտօր Շիւգոյի «Էրնանի» կոչուած թատրոնութիւնը, որև ներկայացում է հայ բեմի վրայ։

Իբրև գասատու հայոց պատմութեան և մատենագրութեան¹⁾ նա քաջ գիտէր, որ պատմական գիտութեան

¹⁾ Պալասանեանն իբրև գրականութեան ուսուցիչ հրատարակեց նաև գրականութեան պատմութեան մի ձեռնարկ, որ կազմած էր վաժուանական թուականներին յայտնի Լիւնիչնկոյի գասագրի հետեւզութեամբ, սակայն այդ գործը

հմտութիւնն ընդհանրապէս և հայ հեղինակների լոգու և ուղղութեան ծանօթութիւնը մասնաւրապէս՝ անհրաժեշտ են հայոց պատմութեանը մի որ և է ծառայութիւն մասնաւրացնել ցանկացողի համար. նա տեսնում էր, որ պատմական գրականութիւնը, որի կրթողական նշանակութիւնը նընապացոյցի կարօտ չէ, համարեա անմշակ դրութեան մէջ էր մեզանում, իսկ ազգային պատմութիւնը տակավին մանկական վիճակի մէջ¹⁾:

Իսկ մեր գրականական նոր լեզուն աւելի թշուառ դրութեան մէջ էր. գրոց կամ գրաբար լեզուի պաշտպան ները հալածում էին նոր լեզուի ախոյեաններին, իսկ նոր լեզուի ախոյեաններն իրենց չափազանց եռանդից ծայրահեղութիւնների մէջ էին ընկնում և այնպիսի ինքնահարձեր մտցնում լեզուի մէջ, որ նրա հոգուն հակառակ էին:

Ահա այս բոլորը տեսնելով, Պալատաննեանը հոգւով ու սրտով նույիրում է ազգային պատմութեան ու գրականութեան և աշխարհիկ լեզուի ուսումնասիրութեան և մշակութեան գործին: Գրաբար ու աշխարհաբար լեզուի պաշտպանների չափազանցութիւնները մերժելով նա իր տոկուն աշխատասիրութեամբ և ըմբռնման ընդուժերի մասց, որովհետեւ հրատարակութիւնը միայն «Բանաւոր գրականութիւնը»:

1) Պատմաննեանի «գլուխ գործոցը» նրա «Հայոց պատմութիւններ» է, որ տասնեակ տարիների բրտնաջան աշխատութեան արդիւնք լինելով՝ իր մահից յետոյ միայն հրատակուեց «հրատարակչական ընկերութեան» միջոցով¹⁸⁹ թուին և այժմ արդէն երկրորդ տպագրութեամբ մի քանի հազարներով ցըւում է հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ: Կորաքանչիւր հայի սեղանի զարդը պէտք է լինի այդ գիրքն այժմ և անյագ կարդացուի:

Ապակութեամբ մշակեց աշխարհաբարի միագողարիկ, սպահուն և քաղցրահնչիւն ուն: Նա իր քեղմնաւոր ըննադատութիւններից մէկի²⁾ մէջ անումէ չէ, լիզում անհագի ու անկենդան նիւթչէ, որ կարելի լինի նրան մեր ուղածին պէս մէկ կաղապալարի վրայ ձևել. նրա բոլոր ձեւերը մէկ կանգունելով չափել: Ենթան հոգի է, կենդանութիւն է, ստեղծագործութիւն է. ստեղծագործութիւնն պատութիւն է նիւթային, նրան չէ կարելի բռնաբարել կամ չղթայել, սաւն կանոնների ու միակերպութեան տակ ձգելով...:

Պալատաննեանը դպրոցի մշակ լինելով, քարոզում է ազգային դպտիարակութիւն³⁾: Նա կամենում է հայ ժողովրդին հասկացնել, որ եթէ դպրոցն առհասարակ անհրաժեշտ է, մեղ համար նա կեանքի ու մահուան խնդիր է, մի խնդիր՝ որի հետ սերտ կապուած է մեր լեզուի գոյութիւնը, ազգային կեանքի այս ամենահաստատ սինը:

Ներկայում դժուար թէ գտնուի մի հայ հասարակութիւն, որքան էլ սակաւառը լինի, որ համոզուած չլինի թէ տգիտութիւնը մեր ամենամեծ թշնամին է, որի դէմ պատերազմելու միակ միջոցը դպրոցն է: Պարոցից է կախուած ազգի ու եկեղեցու փրկութիւնը:

Պարոցի հետ ի միասին Պալատաննեանն ազգային լեզուի և ազգային պատմութեան ուսումնասիրութիւնը համարում է մեր ազգի կեանքի և մահուան խնդիր³⁾: Նա կշտամբում է անկերջ ու յուսահատ երեմիաներ կարդացողներին, որոնք բացի վնասից ոչինչ օգուտ չեն բե-

1) Մինաս Զերազ, գրական փորձեր, տես. «Փորձ» Ա. տարի № 2. Էջ 358—368:

2) Տես. Ազգային կրթութիւն յօդուածը. «Փորձ» Ա. տարի № 4. Էջ 89—160.

3) Տես. «Փորձ» Բ. տարի № 3. Էջ 285—311:

բում, բաւական է, Աստուծոյ սիրուն, որքան ողբացիք ազգի անմիաբանութեան և թշուառութեան վրայ: Յոյց տուէք ընդհավառակը՝ թէ այդ (առակ դարձած անմիաբանութիւնն ոչ թէ հայ բնաւորութեան յատկանիչն է, այլ հետևանքը է պատմական և տեղագրական անյաջող պայմանների, թէ մեր թշուառութիւնն ընդհանրապէս նախընթաց պատճառների անհրաժեշտ արգասիքն է: Հիացէք այդ պայմի բարյական զօրութիւնների վրայ, որ անտանելի տանջանքներ կրելուց յետոյ, միշտ անօդնական և հալածուած լինելով, ցրուած ու զատուած, կարողացաւ պահպանել իր ազգային ինքնուրոյնութիւնը: Կասկածական աչքով մի նայեր հայի ասպագյի վրայ, այլ համեմատելով նրա երեկուան վիճակը՝ երբ դեռ անշարժ ընկած էր գետնին, այսօրուան դրութեան հետ՝ երբ գետակցութեան կայծը մկառմէ տաքացնել նրա թմրած հոգին, ցոյց տուէք որ պէտք է կատարեալ փստահութիւն ունենայ վազուան աւուր վրայ:

Եւ Պալատանեանը վերացական կերպիւ չէ դատում, այլ նա այդ ասում է՝ ուսումնասուրելով հայոց անցեալը¹⁾. Նա աշխատում է հայոց բևեռապրերի բովանդակութիւնը կապակցել մեր տոհմային պարմագրութեան հետ և մեր նախնեաց անկախութեան ձգումնոց մասին խօսելով շատագովում է Մ. Խորենացուն, որ չ'նայելով իր խորին ծերութեանը, զարմանալի փափուկ սրտի և ողեռուող բնաւորութեան տէր մարդ է. նա հայոց թագաստութեան հաստատութեամբն այն տատիճան է յափշտակում, որ «Երանի» կը լինէր ինձ, բացականչում է նա, եթէ Փրկիչն այն ժամանակ աշխարհ եկած և ինձ գոտած լինէր, որ

ես էլ Հայկազուն թագաւորների ժամանակ ապրէի, Նրանց տեսութեամբն ուրախանայի...¹⁾:

Պալատանեանն ուսումնասուրելով մեր պատմութիւնը, այն եղրակացութեան է զալիս, որ թէ Հայաստան աշխարհն իր գոյութեան ամենաընդարձակ չրջանում, ամենից զօրաւոր, ծաղկեալ և յառաջադէմ երկիրը չէր, այնուամենայնիւ նա իր նշանակութիւնն ու տեղն ունէր ասիական աղգերի խմբի մէջ հայկազուն իշխանների ու թագաւորների դաշնակցութեանն ու միջնորդութեանը դիմեցին միշտ հին աշխարհի մեծամեծ աշխարհականներն այն նշանաւոր ինդիրների համար, որոնք աղգերի բազգը վճռեցին: Հայ աղգը թէս միշտ պատած է եղել իրենից աւելի զօրաւոր ու կարգաւորեալ պետութիւններով, այնուամենայնիւ միշտ գիտացել է իր արժանաւորութիւնը պահպանել սուրբ ձեռին անընդհատ կռուելով իր անկախութեան և ազգային միութեան համար:

Պալատանեանի պէտ ուսումնաստենչ հայ մարդը հարկաւ չէր կարող անուշագիր թողնել այն հնկայական մըտաւոր ձգտումը դէպի վերածնութիւն, որ տեղի ունեցաւ հայոց մէջ հինգերուի դարում և անա նա զրում է «Հայոց մտաւոր շարժողութիւնը հինգերորդ դարում»²⁾, որի մէջ հայ երիտասարդների բուռն ցանկութիւնն է նկարագրում դէպի ուսումն և աղգային վերածնութիւնը: Ինչպէս մի գետ, որի ջրերն երկար ժամանակ արգելուելով բարձրացած ժումբը խորտակում, առաջ են մղում, այսպէս և հայոց աշխարհի թարմ և նորաբոյս ոյժերը տղիտութեան թմրից աղատուելով, որ զարևոր ժամանակներ թանձր խաւարի մէջ էր պահել իրենց հայրերին, մէկը

¹⁾) Տես. Մ. Խորենացի. գերք առաջին, գլուխ Իբ.

Էջ 70:

²⁾) Տես. «Փորձ» Բ. տարի N 3. Էջ 1—68:

միւսից առաջ էին վագում մտաւոր սնունդով իրենց քաղցը յագեցնելու: Ոչինչ էր երևում նրանց աշքին հայրենիքից բաժանուել, տարիներով հեռու մնալ աղքականներից ու սիրելիներից, որովհետև այդ կամաւոր պանդխտութիւնն իրենց սիրելի հայրենիքի օգտի համար էին յանձն առնում: Ի՞նչ բան է ոգևորութիւնը. այն միջոցին, երբ չայստանը քաղաքականապէս բաժանուած էր և հեռատես մարդիկ տեսնում էին նրա մօտակայ անկումը, մի խումբ եռանդուն երիտասարդներ ձգտում էին յունական քաղաքակրթութիւնը տեղափոխսել չայստան, Վազարշապատը դարձնել երկրորդ Աթէնք և Աղէքսանդրիա: Ապա խօսելով Մ. Խորենացու, Դաւիթ Անյաղի և այլոց վրայ, Պալասանեանը յիշում է իր երիտասարդական գեղեցիկ և բարձր իդէալական ձգտումները: Ով իր երիտասարդութեան տարիներն անց է կացրել արևմտեան քաղաքակրթութեան կենդրութեան այն նպատակով, որ մի որ և է կողմից օգուտ տայ այն հասարակութեանը, որի մէջ սահել են իր մանկութեան օրերը, նա հեշտութեամբ կարող է հասկանալ թէ որպիսի ցանկութիւններով ոգեռուած պիտի լինէին Սահակի և Մեսրոպի աշակերտներն իրենց երկար ճանապարհորդութիւնից յետոյ չայստան վերադառնալիս: Երևակայեցէք աղգի յառաջադիմաւթեան իդակ վառուած վաշտուն հայ ուսումնականներ, որոնք իրենց երկարատես պանդխտութեան և տոկուն աշխատասիրութեան վարձը ստացած՝ ոտք են կոխում հայրենի հողի վրայ: Ի՞նչ պիտի լինէր նրանց դիտաւորութիւնը՝ եթէ ոչ իրենց ամբարած թանկագին գանձը—ուսումն և գիտութիւնը չայստանի մէջ ծառակել: Վազարշապատը նրանց չնորհիւ պիտի դառնար մի նոր կենդրոն, մտաւոր կեանքի հող, որտեղից լուսաւորութեան ճառագայթները պիտի տարածուէին ամբողջ երկրի վրայ: Նրանք մէկ սիրո ու մէկ հոգի եղած ուխտեցին իրենց աշխատութիւնը ը

ինայել աղգի օգտի համար: Քաղաքական կեանքի անկումը մեծ արգելը չէր երևում նրանց անընկճելի արիութեան, նրանց մեծ ոգևորութեան առաջ, որ արդէն վարդագոյն գոյներով էր տեսնում հայ աղգի մտաւոր վերածնութիւնը: Պալասանեանի գգայուն սիրո թախիծով և սրտաճմիկ կերպիւ է նկարագրում այն աղէաները, որոնց հանդիպեցին այս գեղեցիկ իդէալաներով հայրենիք դարձող երիտասարդները: Տէր Աստուած, ի՞նչ զրպարտութիւններ չբարդեցին նրանց գլխին. նրանց լեզուի վրայ ծիծաղում էին, նրանց արհամարհում էին իբր անհաստատ, համոզմունքից զուրկ անձանց, որոնք ոչինչ պիտանի գիտութիւն չունին, նրանցից ամեն մէկին մի մի աղանդաւոր էին համարստամ: Եւ որոնք էին այս սիսերիմ թրցնամիները: Ցաւ է ասել, որ նրանք այն դասին էին պատկանում, որ իր կոշմամբ պարտաւոր էր ամենից աւելի փայփայել, սիրալիր ընդունելութիւն ցոյց տալ նրանց:

Պալասանեանը չէ բաւականանում միայն հայոց անցեալն ուսումնասիրելով նա հոգում է նաև ներկայի մասին. նա ճանաչում է իր աղգի բարոյական կողմնը և յարմարեցնում է դրան «տասն և իններորդ դարու նշանաբանը»¹⁾ այսինքն որ հայ աղգը չ'պէտքէ մեռնի և չի կարող մեռնել: նա տեսնում է, որ հայն սթափուեցաւ իր բարոյական թմրութիւնից. նա իմացաւ թէ իր գրյութիւնն երեկուանից չէ սկսում, այլ ունեցաւ մի փառաւոր անցեալ, ունեցաւ իր Տիգրաններն ու Տրդատները, Վարդաններն ու Վահանները, Մերատներն ու Անոնները, Ներսէսներն ու Սահակները, որոնց մեծագործութեան յիշաւակներն ոչ միայն գրքերն են լցնում, այլ և հայրենի երկրի բոլոր անկիւնները ծածկում են: Հայն սկսաւ զգալ թէ ինքն էլ ուրիշների պէս մարդ է, թէ ինքն էլ ուրիշ

¹⁾ Տես. Փորձ. Բ. տարի. № 1. Էջ 129-174:

աղքերի պէս գոյութեան իրաւոնք ունի, և թէ յալէտքէ պահպանէ իր աղքային առամճաւութիւնները, իր լեզուն, իր կրօնը, իր սովորութիւնները: Պալասաննեանն իրաւացի կերպիւ կշտամբում է նրանց, որմնք այս բնական և օրինաւոր ձգտման դէմ մեր մէջ դժբաղտաբար զինաւորում են, որմնք համարադրացիութեան (cosmopolitan) սկզբունքներով տոգորուած՝ կարծում են թէ հայը չէ կարող ոչինչ յառաջադիմութիւն անել, ոչինչ օգուտ բերել իրան և ուրիշներին, քանի որ կաշխատի պահպաննել իր աղքային անհատականութիւնը: Ուրիշներն աւելի ստոր զգացմունքներից ովելուուած, մութ անկիւններում համարձակում են հեղիսօրէն խօսել հայութեան վերածնութեան վրայ, կամնապով հաւատացնել թէ հայկական կեանքը քաղաքակրթութեան տարրեր չէ բովանդակում իր մէջ, հետևապէս և աւելորդ յամառութիւն է այդ կեանքին հաւատարիմ մնալ: Թէ առաջինները և թէ վերջինները կեղծ մարդասիրութեան դրօշակի տակ մտած՝ քարոզում են մեզ հրաժարուել մեր աղքային առանձնութիւններից և խառնուել, ձուլուել ուրիշ աղքերի հետ: Հայրենասիրութիւնը և աղքասիրութիւնը մի անօգուտ և աննպատակ ցնողը են համարում նրանք: Սակայն անհնար է ամբողջ մարդկութիւնը սիրել՝ իր սեպհական հայրենիքը չսիրած, ինչպէս որ անկարելի է հայրենիքը սիրել՝ եթէ մարդ նախ իր հարազատ գերդաստանը չէ սիրում:

Խօսելով կրօնի տարբերութեան պատճառած վնասների վրայ, Պալասաննեանն այն կարծիքն է յայտնում, որ մենք՝ հայերս սկսում ենք հասկանալ, որ թէ լուսաւորչական, կաթոլիկ և բողոքական, մեր ամենի երակներում վաղում է հայ արիւն, ամենիս կրծքում բարախում է մի հայ սիրտ, որի ցնծութեան և տրտմութեան առարկաները միմնոյնն են. սակայն հաւատափոխութիւնը վնասակար համարելով նա ասում է. այնտեղ ուր կրօնը մէկ

աղքութեան հետ է կապուած, ովրամանաւանդ աղքի գոյութեան համար քաղաքական ապահովութիւն չկայ, կրօնը ամենաաղքութիւնը միշոց է աղքայնութեան համար: Եթէ այսօր ուրախանում ենք, տեսներով որ մեր հոռմէական տղագային մէջ մտած շարժողութեան շնորհիւ շատ անհատներ վերադառնում են հայոց եկեղեցու գիրկը, կրօնամօլութեան ովինչ մեզ ոգեսրողը, այլ մի շատ բնական և արդարացի զգացմունք, աղքայնութեան զգացմունքը: Այն օրը, երբ աղդն այս կամ այն հանապարհով իր աղքադան ապահոված կը համարի, տարակոյս չկայ, որ խզի աղատութիւնն օրէնքի զօրութիւն կստանայ մեղանում, որովհետեւ մեր եկեղեցին ի ընէ ներողամիտ է և զերծ ամեն տեսակ փառասիրական և փանատիկոսական ձգտումներից:

«Յունաստանի անկախութիւնը»¹⁾ յօդուածի մէջ կարել է գտնել այն հայեցակէտը, որ ունէր Պալասաննեանն իր աղքի աղքատրութեան վերաբերմամբ տաճիկ բռնակալութիւնից. նա թէկ Յունաստանի աղքատրութեան նախայր «Շիզասի» հետ բացականչում է. միթէ գեռ երկար ժամանակ ադխուճների պէս առանձնացած պիտի ապրիք կրծերում, լեռնոտ և ժայռոտ տեղերում: Երկար ժամանակ պիտի ապրիք մուլժ այրերում և անտառներում, զարհուրելի և դասն ստրկութեան մէջ, և պիտի փախչիք լոյսից: Երկար ժամանակ աննպաշտպան պիտի թողնէք ձեր եղայրներին ու ծնողներին, ձեր հայրենիքը, ձեր բարեկամներին և զաւակներին, ձեր տուն ու տեղը: Յիշեցէք որ աւելի լաւ է մի ժամ աղքատ ապրել, քան հաղարաւոր տարիներ անցկացնել ատրկութեան լծի և բռնակալի իշխանութեան տակ: Սակայն, շարունակում է Պալասաննեանը, յոյն ժողովրդին վիճակուած չէր նիւթական զօրու-

¹⁾ Տես. Փորձ. Բ. տարի №. 2. էջ 163-230.

թեամբ գրաւել քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնը, այլ միայն արևելեան անշարժութիւնից սթափուելով և արևտեան լուսաւորութեան հետ միանալով, Բիւզանդական և տաճկական բռնակալութիւնն ոչնչացը էր յոյներին քաղաքականատիւս, բայց աւելի մեծ ցաւն այն էր, որ ժողովրդի բնաւորութիւնը խանգարուել էր Բիւզանդական ժամանակների բարոյական ապականութեամբ և թուրքերի մեռելատիւ անշարժութեամբ։ Ոչ մի արտաքին արշաւանք, ոչ մի ներքին ապստամբութիւն չէր կարող այդ երկիրագարամեայ ովրալի ստրկութիւնը խորտակել, այդ կը յաջողուէր միայն այն ժամանակ՝ եթէ կարելի լինէր սի անգամ էլ շարժողութեան մէջ դնել ազգի քոլոր հոգեւոր եւ քարոյական զօրութիւնները։

Ցոյն պատանիները, որոնք դաստիարակւում էին արևմտեան քաղաքակիրթ երկրներում, այնտեղ սովորեցան համականալ իրենց հին կեանքի ողին, մանաւանդ գերմանիայում, ուր ամենայն մանուկ ողեալութեամբ լսում էր թէ ինչպէս մի ափ յոյն ժողովուրդ Եւրոպայից յետ մղեց պարսիկ բարբարուներին; Կարմոն էր չգարթել յոյն ուսանողների մէջ այն միտքը՝ թէ իրենք էլ պէտք է միացնեն իրենց թոյլ ուժերը՝ կործանելու նոյնպիսի բարբարութեան մնացորդներն իրենց հայրենիքում։ Ականատես մարդիկ պատմում են թէ որպիսի յափշտակութեամբ Շիլցըն Ենայում համոզում էր յոյն ունկնդիրներին իրենց հայրենիքում։

Մի ուղիւ յօդուածի մէջ¹⁾ Պալասանեանը հարց է տալիս իրեն. արդեօք չայաստան աշխարհի արդիքը բարոյական իրաւունք ունին մտածելու իրենց ապագայ բարութեան վրալ. և պատախանում է ողեալուած և զողու-

¹⁾ Տասն և իններորդ գարու նշանաբանը. տես. Փորձ. Ք տարի №. 1. էջ 129-174.

րիկ խօսքերով. ոչ ոք կարող չէ գոյութեան իրաւունքից զրկել այն ազգին, որի ուսերի վրայ բարձած էր անցեալում քրիստոնէական գաղափարի համար տուած պատերազմի ծանրութիւնը, և որին նոյն իսկ արևմտեան ազգերի կարծիքով, վիճակուած է ապագայում նոր քաղաքակրթութեան միջնորդ հանդիսանալ եւրոպական և ասխական ազգերի մէջ։ Բացի սբանից հայերը, աշխարհիս ամենահին ազգերից մինը, նոր ժամանակներում ցոյց տուին թէ իրենց կենսական ոյժը չէ սպառուել, այլ արևի ջերմութիւնից և զրի խոնաւութիւնից զուրկ տունկի պէս երկար ժամանակ ժառանամած վիճակի մէջ են մնացել նոր զօրութեամբ զարգանալու ու բարգաւաճելու համար։ Հազիւ կէս դար կայ, որ այդ արևի ջերմութիւնն սկսաւ տաքացնել հայի թմրած մարմինը և չուրը կազմուեր նրա հոգին, և ահա այսօր այդ մարմինը կենդանութեան նշաններ է ցոյց տալիս, այդ հոգին արձակուում է դարեսը տգիտութեան կապանքներից։ Կարճ միջոցում կազմուեցաւ մի նոր հայկական լեզու, նոր մտքերի ու քաղաքակրթութեան թարգման, գլութական զօրութեամբ յարութիւն արաւ մի նոր զբականութիւն, որ թէ գեռ մանուկ, սակայն խոստանում է աճել և գեղեցիկ պատուղներ արտադրել։ Մնում է մեղ այս ճանապարհով ընթանալ, առանց երրէք վհատելու, առանց փոքրութեամբ տեղի տալու այն խոչնդուների առաջ, որոնց կարող ենք հանդիպել մեր վերածնութեան շաւզի վրայ, և այն ժամանակ ամենայն հայ կարող է հանդարտ աշքով նայել հեռաւոր ապագայի վրայ, ամենայն ծշմարիտ հայ կարող է համարձակ կրիստութեան գալութիւնից Պամէսի հետ «մի ազգ չպէտք է մեռնի, նա չէ կարող մեռնել»։

Պալասանեանը յայտնի է մեր նոր գրականութեան մէջ նաև իրեկ կրիտիկոս. «Գրիշ» կեղծ անուան տակ ծածկուած նա զարգարում էր «Փորձ» հանդիսի էջերն իր ա-

նաշառ և ընդարձակ քննադատութիւններով, որ ցայժմ անդրտական մնաց մեր մանուկ գրականական ասպարից գում: Ոչ ոք չէ կարող ժխտել, որ քննադատութիւնը եթէ նա հիմնուած է առողջ և անաշառ սկզբունքների վրայ, մեծ օգուտ կարող է բերել այն անձանց, որոնք հրապարական ասպարիզի որ և է աստիճանի վրայ երեսում են՝ առաջնորդելով նրանց իրենց գործունէութեան մէջ: Քննադատութիւնն այն գորաւոր միջոցն է, որ հասարակական կեանքի անխւը տեղից շարժում և պարտ ու պատշաճ ուղղութիւնն է տալիս նրան: Մեր նոր լեզուն և գրականութիւնը, չնայելով իրենց մանուկ հասակին՝ քիչ շատ յառաջադիմել են, բայց այդ յառաջադիմութիւնն աւելի արդիւնաւէտ կլինէր անշուշտ, եթէ ունենայինք Պալասանեանի նման քանի մի անաշառ և խոհուն քննադատներ:

Պալասանեանը շնայելով իր զբաղմանց շատութեանը՝ հետևում էր նաև երրոպական գրականութեան նորութիւններին. նա թարգմանում էր գիտական ընդարձակ յօդուածներ և յարմարեցնում մեր կեանքի պահանջներին. այսպէս նա գրում է. «Դիտութիւն և կրօն», «Աղգերի զարգացման օրինքները», «Բնաւորութիւնների ժառանգականութիւնը» և այն, որոնք նրա ինքնուրոյն պատմական հետազոտութիւնների հետ ի միասին տըլում էին «Փորձ»-ի մէջ և ամենայն համակրութեամբ կարդացւում հայ երիտասարդութիւնից:

Օտար գրականութիւնն ուսումնասիրելով Պալասանեանը շատ անդամ բարի նախանձ է զգում. իր քննադատութիւններից մէկի մէջ¹⁾ օրինակի համար նա ասում է. ամեն անդամ որ կարդում եմ ուրիշ ազգերի ժողովրդ:

¹⁾ «Նալայ ու Դամայանտի», տես. Փորձ, Բ. առարի, №. 3. էջ 326—336.

դական բանաստեղծութիւնները, ցաւը և նախանձը տիրում են սրտիս: Ինչի մեկը էլ չպէտք ունենայինք մեր գիւցադնական վէտերն ու զրոյցները, որոնց մէջ հոչակուած լինին հայ հերոսների սխրագործութիւնները: Պատմական յիշատակարանները ցոյց են տալիս թէ հայ վիպասանների բամբիւն ու քնարն երկար ժամանակ հնչել են Հայաստանի գեղեցիկ երկնքի տակ ու մամնաւորապէս գինաւէտ Գողթան այգիների մէջ: Ուր են խորհեացու յիշատակած «Ծուելեաց երգերը»: Ո՞հ, ի՞նչ անգին գանձեր կլինէին նրանք մեզ համար, ի՞նչ դիւթական գօրութիւնն կունմենային նրանք մեր մատաղ սերնդի վրայ, որ սովոր է լսել միայն մի քամի կցկտուր, անհոգի ու անկենզան տեղեկութիւններ մեր պատմական անցեալից՝ առանց լսածների խորհուրդն իմանալու, առանց գործող անձանց գործերը սիրելու:

Պալասանեանը զբաղում էր նաև ժամանակակից խնդիրներով. երբ արեւելեան վերջին Ռուս-տաճկական պատերազմից անմիջապէս յետոյ Հայաստանի հայ ժողովաւրդը կրկին ձգտումներ էր ցոյց տալիս գաղթելու, Պալասանեանը հանգէս է գալիս իր «գաղթականութեան խընդիրը» յօդուածով²⁾ և զգուշացնում է հայ ժողովրդին այդ ազգութիւն կործանող ձեռնարկութիւնից: Յօդուածի սկզբում նա խօսում է Շիլէրի բերանով.

...Ո՞հ, պինդ ամրացրու

Սզգութեան կապը, սրտով միացիր
Մեր սուրբ, թանկապին հայրենիքի հետ.

Նրա մէջ հաստատուած են քո զօրութեան
Պինդ արմատները: Նրանից հեռու,

Օտար աշխարհում կը լինիս մենակ

պատմական ինչպէս թոյլ եղէվն առ մասն
Օրին կը կոտրէ ամեն փոթորիկ։ Առաջ մէ հայ
Ապա յառաջ բերելով հայոց պատմութեան մէջ տեր
զի ունեցած բազմաթիւ գաղթականութիւններն առ դրանց
վնասակար ազգեցութիւնը բացատրելով՝ Պալատանեա-
նը սրտից ցաւով ասում է, ուր էք կամենում գաղթել որ-
տեղ յոյս ունիք գտնել այն տնտեսական և բարոյական
ապահովութիւնը, որ ամենայն ժողովուրդ իմկասից իր
բնիկ երկրում պիտի աշխատի ձեռք բերել և որ օտարու-
թեան մէջ յաճախ աւելի դժուար է ստացում։ միթէ
անցեալի օրինակները ձեր աչքի առաջ չեն։... Եթէ այ-
սօր օտարի կողմից չէ կարելի տեսնել այն գազանային
բռնակալութիւնը, որին ենթարկուեցան օրինակի համար ի-
տալիայի և Լեհաստանի հայ գաղթականները, դրա փոխա-
րէն նոր քաղաքակրթութիւնն ունի աւելի նուրբ միջոց-
ներ ներգործելու, որոնք նրանով տեղի վտանգաւոր են,
որ ամբոխի աչքերին չեն երեսում։ հետեապէս և դժուար
է լինում նրանից անվնաս մնալ։... Ամենալաւ օդն այն
է, ուր ազգը ծնել է։.. Զէ, պանդստանէր հայ, քաւ է
որքան քո հայրերն ու պապերը թափառեցան օտար եր-
կրնիկ տակ։ Իմացիր որ եթէ դու էլ և քեզ նայելով քո
որդիին էլ աչքերդ անզագար հայրենիքից գորս ունե-
նաք, որ կը զայ, որ ձեզանով ոչ միայն ձեր աղջութիւ-
նը կորուստ կունենայ, այլ և մարդկութիւնը... Եթէ
մինչեւ այսօր հեռանալով քո երկրից փարք ի շատէ ար-
դարանում էիր, մեծ յանցանք կը լինէր քո կողմից ու
մեծ ապերախտութիւն հայրենիքիդ դէմ՝ պանդստութիւ-
նը շարունակել և ներկայումս։...

Պալատանեանն այն կարծիքի էր, որ այն հայ երի-
տասարդները, որոնց գիտութիւնը և տաղանդն ոչինչ օ-
գուտ չէ բերում հայ հասարակութեանը, համակրութեան
արժանի չեն։ Այսպէս օրինակի համար իր յօդուածնե-

րից մէկի մէջ ¹⁾ նա պատմում է այն հայ երիտասարդ-
ների զործերը, որոնք մեծ հոչակ էին հանել Աթէնքում
իրրե գիտնականներ, — որոնցից մէկի, Պրոյերեսիոսի հա-
մար հռովմայեցիք պղնձէ արձան կանգնեցրին „regina
rerum roma, regi eloquentiae“ մակագրութեամբ, որ նը-
շանակում է. «Ժագաւորների թագուհի չոռվմը՝ պերճա-
խոսութեան թագաւորին»։ — սակայն նա չէ ոգևորում
սրանցով, որովհետև ինչպէս Պրոյերեսիոսի, այնպէս և
միւս աթենացի հայ գիտնականների մտաւոր գերազան-
ցութիւնը բոլորովին անպատճ անցաւ չայաստանի համար՝ և
այս բանը յիշելու արժանի է համարում միմիայն նրա հա-
մար, որ ցոյց տայ թէ ուսման և գիտութեան սէրը վա-
զուց արդէն զարթել էր հայոց մէջ և թէ միայն մի
զարկ էր հարկաւոր, որ այդ սէրը տարածուէր ընդհանուր
հայ ազգի մէջ...»

Այս փոքրիկ տեսութեամբ մենք ցանկացանք ցոյց
տալ Պալատանեանի գրականական ուղղութիւնը՝ նոյն
իր երկերից անմիջապէս։ Այդեղ պարզապէս երե-
ւում են նրա ներքին արժանաւորութիւնները։ Նա ու-
նի նուրբ զգացմունք, ազնիւ ձգտումն, զգայուն սիրտ, խո-
հում գտառողութիւն, լուրջ և քննադատական հայեացը իրերի
վրայ, լիակատար ճանաչողութիւն մեր անցեալ և ներկայ
կեանքի, ողորկ և գրաւիչ լեզու, սիրող եւրոպական գրա-
կանութեան և այս ամենի պատկը կազմող՝ անսահման
անձնանուիրութիւններ ու պէտքէպէտի հայ ազգն ու նրա
հայրենիք։



¹⁾ Հայոց մտաւոր շարժողութիւնը Երդ դարում։

պահութեան ու պահանջման առ առ առ առ
ու առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

ՀՀ Ազգային գրադարան



NL0388174

Կնմդրումական գրավառառանցում ծախոսում են

Ի Ս Ա Հ Ա Կ Յ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ա Ն Ց Ի

Հետեւեալ աշխատութիւնները.

- ✓ 1) ՀԱՅՈՑ ԳԻՐԸ. բաղկացած 400 երեսից և 8 վերաբերութիւններով. պատկուած է Սահակ-Մեսրոպեան մըցանակով. գինն է 1 ր. 50:
- ✓ 2) ՀԱՄՄԱՌՈՑ ՏՐԱՄՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ. ձեռնարկ հայ ուսուցիչների համար. գինն է 1 ռ.
- ✓ 3) ԳԵՐՄԱՆԻԱՅԻ մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութիւնը և հայ ուսանողները. գինն է 40 կոպ.:
- 4) ՆԵՐՄԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը. յաւելուածով. գինն է 40 կոպ.:
- 5) ՆԵՐՄԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ սաների երկրորդ դպրոցական ճանապարհորդութիւնը. գինն է 20 կոպ.
- 6) Ստեփաննոս Պալասանեան.

Ջիմն և 25 կոպէկ.

- 7) ՀՈՒՔՈՒԷՅՅ, Տարերք բնական գիտութեանց. թարգ. գերմաներէնից. գինն է 40 կոպ.
- 8) Ե. ՍՊԻՐԻ. Վարդ Ենսլին, թարգ. գերմ. գինն է 10 կ.
- 9) Ե. ՍՊԻՐԻ. Ուուենց Յովսէփ. թարգ. գերմ. գինն է 15 կոպ.
- 10) Ե. ՍՊԻՐԻ. Այծարած Մօնի. թարգ. գերմ. գինն է 15 կոպ.
- 11) Ե. ՍՊԻՐԻ. Ալպեան Հովիւ. թարգ. գերմ. գինն է 20 կոպ.

Մամուլի տակն են.

Ա. Դպրոցական բանաստեղծութիւններ.

Բ. ՊԵԱՏԱԼՈՑՑԻ. Լինհարդ և Գերարուդ: